



ԼԵՌՆԱՅԻՆ ՂԱՐԱԲԱՂԻ ՀԱՆՐԱՊԵՏՈՒԹՅԱՆ
ԱՐԴԱՐԱԴԱՏՈՒԹՅԱՆ ԽՈՐՀՈՒՐԴ

№ ԱԽ-3-Ո-1
2012թ.

Ո Ր Ո Շ Ո Ւ Մ

ԼԵՌՆԱՅԻՆ ՂԱՐԱԲԱՂԻ ՀԱՆՐԱՊԵՏՈՒԹՅԱՆ
ԴԱՏԱՎՈՐՆԵՐԻ ԹԵԿՆԱԾՈՒՆԵՐԻ
ՑՈՒՑԱԿԻՑ ՀԱՆԵԼՈՒ ՄԱՍԻՆ

ԱՐԴԱՐԱԴԱՏՈՒԹՅԱՆ ԽՈՐՀՈՒՐԴԸ՝
ՀԵՏԵՎՅԱԼ ԿԱԶՄՈՎ

նախագահությամբ՝ Ա. Ավագյանի
մասնակցությամբ ԱԽ անդամներ՝ Լ.Ասրյանի, Մ.Ավանեսյանի, Ս.Արզումանյանի,
Ա.Լազարյանի, Հ.Խաչատրյանի, Կ.Ղարայանի,
Կ.Սաղյանի, Մ.Սաֆարյանի,

քարտուղարությամբ՝ Գ. Հովհաննիսյանի

2012 թվականի հունիսի 13-ին Ստեփանակերտ քաղաքում, Լեռնային Ղարաբաղի Հանրապետության Գերագույն դատարանի նստավայրում, դռնփակ նիստում, քննության առավ Դավիթ Ռաֆայելի Ավանեսյանին և Կարեն Օլեգի Մելքումյանին Լեռնային Ղարաբաղի Հանրապետության ընդհանուր իրավասության առաջին աստիճանի դատարանի դատավորների պաշտոնում նշանակելու հիմքով Լեռնային Ղարաբաղի Հանրապետության դատավորների թեկնածուների ցուցակից հանելու մասին Լեռնային Ղարաբաղի Հանրապետության Գերագույն դատարանի նախագահի միջնորդությունը և ղեկավարվելով Լեռնային Ղարաբաղի Հանրապետության դատական օրենսգրքի 90-րդ հոդվածի 1-ին մասի 1-ին կետով և 3-րդ մասով,

Ո Ր Ո Շ Ե Ց

1. Հավանություն տալ Լեռնային Ղարաբաղի Հանրապետության դատավորների թեկնածուների ցուցակից Դավիթ Ռաֆայելի Ավանեսյանին և Կարեն Օլեգի Մելքումյանին հանելու առաջարկությանը:

2. Լեռնային Ղարաբաղի Հանրապետության ընդհանուր իրավասության առաջին աստիճանի դատարանի դատավորներ Դավիթ Ռաֆայելի Ավանեսյանին և Կարեն Օլեգի Մելքումյանին Լեռնային Ղարաբաղի Հանրապետության դատավորների թեկնածուների ցուցակից հանելու առաջարկով դիմել Լեռնային Ղարաբաղի Հանրապետության Նախագահին:

ԼՂՀ ԳԵՐԱԳՈՒՅՆ ԴԱՏԱՐԱՆԻ
ՆԱԽԱԳԱՀ

Ա. ԱՎԱԳՅԱՆ